

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
11 ապրիլի 2012 թ.

Պետական գրանցման թիվ 12512188

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

26 մարտի 2012 թ.
ք. Երևան

N 86-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏՈՒՄ ԱՌԿԱ
ՌԱԴԻՈԻՉՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի
օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N
1489-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37-րդ կետով

Հրամայում եմ

Սահմանել ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա
ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների հաշվառման
վերաբերյալ պահանջները, համաձայն հավելվածի:

Ա. Մարտիրոսյան

Հավելված
ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության
կարգավորման պետական կոմիտեի
նախագահի
2012 թվականի մարտի 26-ի
N 86-Ն հրամանի

Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր

**ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕԲՅԵԿՏՈՒՄ ԱՌԿԱ
ՌԱԴԻՈԻՉՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթղթով սահմանվում են ատոմային էներգիայի օգտագործման
օբյեկտներում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների

հաշվառմանը ներկայացվող պահանջները, դրանց կորուստը կամ չթույլատրված օգտագործումը կանխելու նպատակով:

2. Սույն փաստաթղթի դրույթները տարածվում են ատոմային էներգիայի օգտագործման այն օբյեկտների վրա, որտեղ իրականացվում է ռադիոիզոտոպային աղբյուրների արտադրություն, ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում և պահեստավորում:

II. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ՈՒ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

3. Հաշվառման ենթակա են՝

1) այն փակ ռադիոիզոտոպային աղբյուրները (այդ թվում՝ սարքերի և սարքավորումների մեջ տեղադրված), որոնց սկզբնական ակտիվությունը գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» N 1219-Ն որոշման Հավելվածի աղյուսակ N 1-ում տրված կարգավորող վերահսկողությունից ազատման մակարդակները (ռադիոակտիվ իզոտոպների խառնուրդի դեպքում աղբյուրի գործարանային անձնագրում (այսուհետ՝ անձնագիր) նշված իզոտոպների ակտիվությունների գումարի և աղյուսակ N 1-ում նշված իզոտոպների ակտիվությունների գումարի հարաբերությունը պետք է գերազանցի 1 թիվը) ցանկացած 12 ամիսների ժամանակահատվածում:

2) այն բաց ռադիոիզոտոպային աղբյուրները, որոնց տեսակարար ակտիվությունը, ինչպես նաև օբյեկտում առկա աղբյուրների գումարային ակտիվությունը, գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» N 1219-Ն որոշման հավելվածի աղյուսակ N 1-ում տրված կարգավորող վերահսկողությունից ազատման մակարդակները (ռադիոակտիվ իզոտոպների խառնուրդի դեպքում աղբյուրի անձնագրում նշված իզոտոպների տեսակարար ակտիվությունների գումարի և աղյուսակ N 1-ում նշված իզոտոպների տեսակարար ակտիվությունների գումարի հարաբերությունը պետք է գերազանցի 1 թիվը) ցանկացած 12 ամիսների ժամանակահատվածում:

3) այն գեներացնող ճառագայթման աղբյուրները, որոնց ճառագայթային բնութագրերը գերազանցում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» N 1219-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի «գ» և «դ» ենթակետերով սահմանված կարգավորող վերահսկողությունից ազատման մակարդակները:

4. Ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների հաշվառման միավոր են համարվում՝

1) փակ ռադիոիզոտոպային աղբյուրների համար՝ առանձին աղբյուրը:

2) բաց ռադիոիզոտոպային աղբյուրի համար՝ առանձին աղբյուրը կամ փաթեթավորված ռադիոակտիվ նյութի քանակությունը փաթեթում կամ միատարր ռադիոիզոտոպային կազմով ռադիոակտիվ նյութի ապրանքային խմբաքանակը (պարտիան):

3) գեներացնող ճառագայթման աղբյուրների հաշվառման ժամանակ՝ առանձին վերցված սարքը, իսկ ռենտգենյան սարքերի դեպքում՝ նաև ռենտգենյան խողովակը:

III. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄԸ

5. Ռադիոհիգոտոպային ճառագայթման աղբյուրներ արտադրող ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում արտադրված յուրաքանչյուր աղբյուրին, մինչև պատրաստի արտադրանքի պահեստ այն տեղափոխելը, պետք է տրվի անհատական նույնականացման համար, որը հանդիսանում է տվյալ աղբյուրի հաշվառման հիմքը:

6. Փակ ռադիոհիգոտոպային աղբյուրի համարը պետք է նշագրվի դրա արտադրման պրոցեսում աղբյուրի արտաքին մակերեսի վրա և լինի չմաքրվող (մետաղական մակերես ունեցող աղբյուրի դեպքում՝ դաջված, ապակյա մակերես ունեցող աղբյուրի դեպքում՝ գրված հստակ երևացող և չջնջվող ներկով): Փակ ռադիոհիգոտոպային աղբյուրներ պարունակող հավաքվածքների դեպքում, աղբյուրները պարունակող տուփի վրա հավաքվածքի գործարանային անվանումից (մարկայից) հետո պետք է նշագրված լինի հավաքվածքի համարը, իսկ առանձին աղբյուրների համարները՝ դրանց արտաքին մակերեսի վրա:

7. Բաց ռադիոհիգոտոպային աղբյուրի համարը պետք է նշագրված լինի աղբյուրը պարունակող մետաղական, ապակյա կամ պլաստմասսայից տարայի արտաքին մակերեսի վրա և լինի չմաքրվող (մետաղական տարայի դեպքում՝ դաջված, ապակյա կամ պլաստմասսայից տարայի դեպքում՝ գրված հստակ երևացող և չջնջվող ներկով):

8. Ռադիոհիգոտոպային ճառագայթման աղբյուրները պետք է ունենան համարակալված անձնագիր, որտեղ պետք է նշված լինեն արտադրողը, աղբյուրի տեսակը, ռադիոակտիվ իզոտոպը (իզոտոպները), ակտիվությունը արտադրության պահին (ակտիվությունները), արտադրության օրը, անձնագրի լրացման օրը:

IV. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԴՐԱՆՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

9. Ռադիոհիգոտոպային ճառագայթման աղբյուրներ արտադրող օբյեկտում դրանք պետք է վերցվեն հաշվառման պատրաստի արտադրանքի պահեստարան փոխադրվելուց անմիջապես հետո: Բացի հաշվապահական հաշվառման փաստաթղթերից, պատրաստի արտադրանքի պահեստարանում պետք է լինի աղբյուրների հաշվառման մատյան, որում պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները.

- 1) պահեստ մուտքագրված աղբյուրի տեսակը, գործարանային համարը.
- 2) աղբյուրի անձնագրի համարը.
- 3) աղբյուրի պահեստարան մուտքագրելու օրը և ժամանակը.
- 4) պահեստարանում աղբյուրի տեղադրման վայրը (ըստ պահեստարանի հատակագծի).
- 5) պահեստարանից աղբյուրի դուրս գալու (առաքելու) օրը և ժամանակը.
- 6) այն անձի տվյալները, որին առաքվել է աղբյուրը:

10. Եթե ռադիոհիգոտոպային աղբյուրը գտնվում է աղքատացված ուրան պարունակող փաթեթավորման կոմպլեկտում, ապա գրանցման մատյանում պետք է ներառվի փաթեթավորման կոմպլեկտի գործարանային անվանումը (մարկան) և համարը:

V. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

11. Ռադիոհիգուտոպային կամ գեներացնող ճառագայթման աղբյուրներ օգտագործող օբյեկտում դրանք պետք է հաշվառման վերցվեն օբյեկտ հասնելու պահից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

12. Օբյեկտում առկա աղբյուրների հաշվառման ապահովման նպատակով օբյեկտի ղեկավարի հրամանով պետք է նշանակվի հաշվառման համար պատասխանատու անձ:

13. Օբյեկտում առկա աղբյուրների հաշվառման համար պատասխանատու անձը պետք է վարի հաշվառման մատյան, որում պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները.

- 1) օբյեկտում առկա աղբյուրի տեսակը, գործարանային համարը.
- 2) աղբյուրի անձնագրի համարը.
- 3) աղբյուրի պետական գրանցման համարը.
- 4) աղբյուրի հաշվառման վերցնելու օրը և ժամանակը.
- 5) աղբյուրի հաշվառումից հանելու օրը և ժամանակը.
- 6) աղբյուրը հաշվառումից հանելու հիմքը:

14. Հաշվառման վերցված ստացիոնար գեներացնող աղբյուրների համար հաշվառման մատյանում պետք է նշվի դրանց տեղադրման տեղը (արտադրամասը, բաժանմունքը, կաբինետը և այլն):

15. Հաշվառման վերցված այն ռադիոհիգուտոպային աղբյուրների համար, որոնք տեղադրված են ստացիոնար սարքերում, պետք է նշվեն այդ սարքերի տեղադրման տեղը (արտադրամասը, բաժանմունքը, կաբինետը և այլն), դրանց տեսակը, գործարանային համարը, անձնագրի համարը:

16. Եթե հաշվառման վերցված ռադիոհիգուտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրները պահվում են տարբեր տեղերում, ապա հաշվառման մատյանում պետք է նշվի դրանց պահման պահեստարանը և պահեստարանում աղբյուրների տեղադրման վայրը (ըստ պահեստարանի հատակագծի):

17. Պահեստարանում պահվող ռադիոհիգուտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների էլքն ու մուտքը պետք է գրառվեն հատուկ գրանցամատյանում: Պահեստարանում պահվող աղբյուրների էլք ու մուտքի գրանցամատյանում պետք է նշվեն.

- 1) աղբյուրի տեսակը և հաշվառման համարը.
- 2) պահեստարանից աղբյուրի էլքի օրը և ժամանակը.
- 3) աղբյուրը օգտագործման ստացող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.
- 4) աղբյուրը հանձնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.
- 5) պահեստարան աղբյուրի վերադարձման օրը և ժամանակը.
- 6) աղբյուրը վերադարձնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.
- 7) աղբյուրը պահեստարան հետ ստացող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը:

18. Պահեստարանից ռադիոհիգուտոպային և (կամ) գեներացնող ճառագայթման աղբյուր (աղբյուրներ) ստացած անձը աղբյուրը (աղբյուրները) այլ անձի փոխանցելիս պետք է պահպանվեն սույն պահանջների 17-րդ կետում նշված դրույթները:

VII. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՅՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԴՐԱՆՑ ՕՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

19. Ռադիոհիգուտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրներն այլ անձանց օտարելիս, դրանց հետ պետք է փոխանցվեն աղբյուրին վերաբերող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ գործարանային (ռադիոհիգուտոպային աղբյուրների

արտադրման անձնագրային տվյալները՝ արտադրման տարեթիվը, գործարանային համարը, ճառագայթային բնութագրերը և այլն, իսկ գեներացնող ճառագայթման աղբյուրների համար՝ նաև տեխնիկական պայմանները, օգտագործման հրահանգները և այլն):

20. Ռադիոհիգոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների օտարման դեպքում կազմվում է հանձնման-ընդունման ակտ, որում նշվում են հանձնող և ստացող անձանց անվանումները, հանձնման և ստացման ժամանակը, հանձնման-ընդունման ակտին կցվում են նաև սույն պահանջների 19-րդ կետում նշված փաստաթղթերը:

21. Աղբյուրները հանձնողը պետք է 1 աշխատանքային օրվա ընթացքում դրանք դուրս գրի հաշվառումից, իսկ ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ստացող կազմակերպությանն ուղարկի աղբյուրների վերաբերյալ փաստաթղթերը՝ եթե այդ փաստաթղթերը ուղարկված չեն եղել աղբյուրների հետ:

22. Աղբյուրների ստացման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում աղբյուրները ստացող անձը պետք է իրականացնի ստացված աղբյուրների և դրանց ուղեկցող փաստաթղթերի ստուգում և ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանք վերցնի հաշվառման:

23. Ստացող անձի կողմից կատարված ստուգումների արդյունքում բացահայտված անհամապատասխանության դեպքում ստացողը անհապաղ պետք է հայտնի աղբյուրները հանձնողին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե):

VIII. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄԸ

24. Հաշվառված ռադիոհիգոտոպային ու գեներացնող ճառագայթման աղբյուրների առկայության և հաշվառման մատյանում գրանցված տվյալների ճշտման նպատակով օբյեկտում պետք է անցկացվի աղբյուրների գույքագրում:

25. Ռադիոհիգոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների գույքագրումը լինում է՝

- 1) պլանային.
- 2) արտահերթ:

26. Պլանային գույքագրումը կատարվում է յուրաքանչյուր տարի: Պլանային գույքագրման արդյունքները գույքագրման ավարտից հետո 15-օրյա ժամկետում պետք է ներկայացվեն Կոմիտե:

27. Արտահերթ գույքագրումը կարող է կատարվել աղբյուրները տիրապետող իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևի փոփոխման, լուծարման, վերակազմավորման, աղբյուրների հետ աշխատանքների դադարեցման, աղբյուրների գողության, աղբյուրների նկատմամբ չթույլատրված ոտնձգությունների փաստի գրանցման, արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման աշխատանքների ավարտից հետո կամ օբյեկտի ղեկավարության որոշման հիման վրա:

28. Գույքագրման աշխատանքների ընթացքում արգելվում է ճառագայթման աղբյուրների տեղաշարժը օբյեկտի ներսում և դրանց փոխանցումն այլ անձի:

29. Գույքագրման ժամանակ դիտարկվում են.

- 1) հաշվառման մատյանը.
- 2) նախորդ գույքագրման փաստաթղթերը.
- 3) բաց ռադիոհիգոտոպային աղբյուրների համար՝ դրանց թափոնների վերածման կամ ծախսման վերաբերյալ փաստաթղթերը.

4) այլ կազմակերպություններին աղբյուրների փոխանցման վերաբերյալ փաստաթղթերը.

5) աղբյուրների՝ հաշվառումից դուրս բերման վերաբերյալ փաստաթղթերը:

30. Գույքագրման ժամանակ կարող են իրականացվել աղբյուրների տիպաճշտման համար անհրաժեշտ դիտարկումներ, ուսումնասիրություններ և չափումներ:

31. Գույքագրման արդյունքը ձևակերպվում է հաշվետվության տեսքով, որում նշվում է առկա աղբյուրների տեսակի, քանակության և բնութագրերի համապատասխանությունը օբյեկտում վարվող հաշվառման մատյանի տվյալներին:

32. Եթե պլանային գույքագրման արդյունքում հայտնաբերվում է օբյեկտում վարվող հաշվառման մատյանի տվյալների հետ առկա աղբյուրների տեսակի, քանակի և բնութագրերի անհամապատասխանություն, ապա հաշվետվության մեջ նշվում է այդ անհամապատասխանության մասին:

33. Պլանային գույքագրման արդյունքում հայտնաբերված աղբյուրների կորստի, գողության կամ դրանց այլ նպատակով օգտագործման հայտնաբերման դեպքում այդ մասին, ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, գրավոր պետք է հայտնել Կոմիտե:

34. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտում առկա ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրների պլանային գույքագրման հաշվետվության պատճենը գույքագրման ավարտից հետո 15-օրյա ժամկետում պետք է ներկայացվի Կոմիտե: Աղբյուրների գողության կամ աղբյուրների նկատմամբ չթույլատրված ռոնձգությունների փաստի գրանցման դեպքում անցկացված արտահերթ գույքագրման հաշվետվության պատճենը կոմիտե պետք է ներկայացվի գույքագրման ավարտից հետո 5-օրյա ժամկետում:

35. Կոմիտե կարող են չներկայացվել միայն հետևյալ ռադիոիզոտոպային աղբյուրների վերաբերյալ տվյալները՝

1) հակահրդեհային սվիչների մեջ տեղադրված ռադիոիզոտոպային աղբյուրներ.

2) ախտորոշման կամ գիտահետազոտական նպատակներով օգտագործման համար նախատեսված ռադիոդեդոռայքային պատրաստուկներ.

3) ռադիոիմունոլոգիական անալիզների հավաքածուներ.

3) տեխնիցիումի գեներատորներ և մինչև 100 օր կիսատրոհման պարբերությամբ իոնացնող ճառագայթման ռադիոիզոտոպային բաց աղբյուրներ.

4) ռադիոակտիվ իզոտոպներով նշագրված միացություններ.

5) չափիչ սարքերի մեջ մտնող էտալոնային 5-րդ դասի ռադիոիզոտոպային աղբյուրներ:

VI. ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊԱՅԻՆ ԵՎ ԳԵՆԵՐԱՑՆՈՂ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՈՒՄԸ

36. Ռադիոիզոտոպային և գեներացնող ճառագայթման աղբյուրները օբյեկտում հաշվառումից հանվում են հետևյալ դեպքերում.

1) եթե օգտագործման ընթացքում բաց ռադիոիզոտոպային աղբյուրներն օգտագործվել /ծախսվել են (օրինակ՝ ներարկվել են պացիենտներին).

2) եթե գույքագրման արդյունքում արձանագրվել է աղբյուրի կորուստ.

3) եթե ռադիոիզոտոպային աղբյուրի տրոհման արդյունքում դրա ակտիվությունը կամ տեսակարար ակտիվությունը դարձել է կարգավորող հսկողությունից ազատման մակարդակներից ցածր.

4) եթե ռադիոիզոտոպային աղբյուրն այն տնօրինողի կողմից հայտարարվել է ռադիոակտիվ թափոն.

5) եթե աղբյուրն օտարվել է (առուվաճառք, փոխանակում և այլն):

37. Այն փակ ռադիոիզոտոպային աղբյուրները, որոնց երաշխիքային օգտագործման ժամկետը (որը սահմանված է արտադրողի կողմից) լրացել է, ենթակա են.

1) հաշվառումից հանման և ռադիոակտիվ թափոն հայտարարման, որի մասին պետք է համապատասխան գրառում կատարվի ռադիոիզոտոպային աղբյուրների հաշվառման մատյանում և ռադիոակտիվ թափոնների գրանցամատյանում.

2) օգտագործման ժամկետի երկարացման, ինչի վերաբերյալ պետք է լինի հիմնավորման ակտ ու դրա հիման վրա պետք է գրառում կատարվի աղբյուրների հաշվառման մատյանում: Օգտագործման ժամկետի երկարացման հիմնավորման ակտի վերաբերյալ պետք է լինի Կոմիտեի դրական եզրակացությունը: